# ՆՈՐ-ԴԱՐ

№ 153 ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ, Ուրբաթ, 29 Օգոստոսի, 1903 Ուրբաթ, 29 Օգոստոսի, ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 153

Տարին 10 րուբ. վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը 3 ր. 50 կ. ամիսը՝ (Թիֆլիսում) 1 ր., հատով 5 կ.: Բաժանորդ են գրւում միմիայն խմբագրատանը՝ Դաւիդով. փողոց, № 5.

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis, Rédaction «Nor-Dar»

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը: Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով. Յայտարարութիւնների տողին 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Խնամենք մեր աղքատներին:
Քրոնիկոն.—Լուրեր:
Մեզ գրում են.—Ճայլա գիւղից:
Մամուլի շուրջը:
«Քաղաքակրթութեան ներկայացուցիչները» Կ. Պոլսում:
Թղթակցութիւններ.—Նամակ Պարսկաստանից.—Թեհրան:
Քաղաքական. — Ապստամբութիւնը Մակեդոնիայում: Սերբ զինուորականներն ու մակեդ. ապստամբութիւնը: Խալիլը կախաղանի վրայ: Դրութիւնը Թիւրքիայում: Յոյն կառավարութեան առնձգութիւնները: Սերբիական գործեր.
«Նոր-Դար»-ի հեռագրներ:
Խառն լուրեր:
Բանասիրական.—Սառա:
Յայտարարութիւններ:

Թիֆլիս, 28-ն օգոստոսի, 1903 թ.

## ԽՆԱՄԵՆՔ ՄԵՐ ԱՂՔԱՏՆԵՐԻՆ

Ի զուր տեղը չէր, որ մարդիկ կռապաշտութեան դարերում բաղդը աստուածացնում էին: Նրանք ամեն քայլափոխում պատահում էին ծայրայեղութեան հասնող տարբեր մարդկային վիճակների, բացարձակ անհաւասարութեան հազարաւոր օրինակներ ծակում էին նրանց աչքերը: Ի՞նչպէս կարող էին չզարմանալ և ինչ-որ իրենց անհասկանալի գերբնական զօրութեամբ չբացատրել այն սովորական երևոյթը, ուր մէկը իւր գլուխը դնելու մի անկիւն անգամ չունեցած ժամանակ մի ուրիշը տէր էր հարիւրաւոր սենեակներից բաղկացած պալատների, և մի թշուառ իւր ողորմելի գոյութիւնը պահպանելու համար ցամաք հաց իսկ չունեցած դէպքում, մի ուրիշը ամեն օր իւր ստամոքսը պարարտացնում է քաղցրահամ համադամներով:

Չկայ այլևս Բաղդը, վաղուց վերացել է նրա պաշտամունքը, բայց կան ու դեռ շարունակւում են նրա խաղերը իրենց ամբողջ սաստկութեամբ: Մեր կեանքը իւր մէջ պարունակում է ինչպէս փարթամ հարուստներ, իրենց ամբողջ ժամանակը յղփութեան ու առատութեան մէջ անցկացողներ, նմանապէս և խեղանդամներ, կոյրեր, անդամալոյծներ, ծերեր ու այրիներ, որոնք օրուայ հացի կարօտ են և զուրկ մի տաքուկ անկիւնից, ուր կարողանային պատսպարուել բնութեան խստութիւնների դէմ:

Աղքատներ, չքաւորներ, պաշտպանութեան կարօտներ կեանքը ունեցել է միշտ և պէտք է ունենայ այնքան ժամանակ, քանի դեռ գոյութիւն ունի հասարակական ներկայ կազմը և մարդկանց մէջ տիրող բացարձակ անհաւասարութիւնը:

Ուր կայ հարստութիւն, ճոխութիւն, ճիշտ նրա կողքին թաւալւում են աղքատութիւնն ու չքաւորութիւնը: Ամեն մի հասարակութիւն ունի իւր աղքատը, և առաջինի պարտականութիւնն է հոգալ և խնամել աշխատանքի ընդունակ, իւր գոյութեան յոյսը ուրիշների վրայ դրած իւր անդամներին:

Թէև աղքատների խնամատարութեան համար կան մշակուած որոշ ձևեր և շատ քաղաքներ, մանաւանդ Եւրոպայի լուսաւորուած երկրներում, ունեն մի շարք հաստատութիւններ՝ թշուառութիւնը խնամելու համար, սակայն, մեզանում, շատ տեղեր, այդ գործում ևս տիրում է կատարեալ նահապետականութիւն: Մեզանում մարդկութեան այդ թշուառ դասը թողնուած է բացարձակապէս իւր բաղդին: Նա ինքն է, որ փողոցների անկիւններում, եկեղեցիների դրանը հաւաքած մի քանի խեղճ ու կրակ կոպէկներով պէտք է հոգայ իւր կեանքը և ապրի մի օր կուշտ, միւս օրը քաղցած:

Կասկած չկայ, թէ նրանք ամենքն էլ ապրում են, և այդ ապրուստը հոգացողն ինքը՝ հասարակութիւնն է:

Քանի որ այս կամ այն քաղաքի ժողովրդի վրայ այդ ճանապարհով ծանրացած ծախսը անխուսափելի է, քանի որ նրա բարոյական պարտքն է համարւում իւր անտէրներին հոգալ,—այն ժամանակ ինչն է արգելում այդ միևնոյն ծախսը անել առաւել պատշաճաւոր ու կանոնաւորուած ձևի տակ:

Աղքատութիւնը խնամելու գործի կանոնաւորութիւնն ու ծրագրուած սիստեմը մուրացկանութեան առիթով առաջացած մի շարք չարիքների առաջն առնելուց յետոյ, հանդիսանում է ինքնստինքեան բարձր առաքինական ու մարդավայել մի գործ:

Հասարակութեան օգնութեան դիմող չքաւորներին կարելի է բաժանել երկու խմբի: Դրանց մէջ կան աշխատութեան բացարձակապէս անկարողներ, մարմնական խոշոր պակասութիւնների պատճառով, և կան նմանապէս և այնպիսիներ, որոնք գործելու ամեն հնարաւորութիւն ունենալով հանդերձ, դիմում են ապրուստի այդ ճանապարհին, որովհետև գործ չունեն, վաստակ չունեն: Մուրացկանների մէջ եղած այդ հիմնական տարբերութիւնը առաջ է բերում օգնութեան երկու տարբեր ձևեր:

Աշխատանքի բացարձակ անկարողներին մուրացկանութեան անտանելի վիճակից ազատելու համար կամ պէտք է ունենալ առանձին հաստատութիւն, ուր պատսպարուեն ու խնամուեն նրանք և կամ նրանցից ամեն մինին պէտք է յատկացուած լինի ամսական որոշ թոշակ: Առաջին կերպը —մասնաւոր հաստատութիւն ունենալը, ամեն տեսակ յարմարութիւններ ներկայացնելուց յետոյ, նախատեսուելու է նաև տնտեսական տեսակէտից. իսկ միւս մասի օգնութիւնը պէտք է կայանայ նրանց համար գործ, աշխատանք ստեղծելու մէջ: Դրա համար հարկաւոր է ունենալ արհեստանոց կանանց տղամարդկանց ու երեխաների համապատասխան առանձին առանձին տեսակ ամենագործածական ու գիւղին արհեստներով: Կանոնաւոր ու աչալուրջ հսկողութեան տակ դրուած աշխատանքի այդպիսի մի տուն ոչ միայն կարող է նրա մէջ աշխատողներին ապրուստի միջոց տալ իւր ծախսերը ծածկել, այլև կարող թողնել որոշ մի գումար շահ:

Իւրաքանչիւր քաղաք, որքան էլ փոքր լինի նա ու աննշան առաջարկուած երկու ձևերն ևս կարող է գործադրել, անշուշտ, իւր ոյժերը ներած սահմանների մէջ. իսկ մեծ քաղաքներում, մամնայի թագաւորութիւնների մէջ, թէ մէկ և թէ միւս ձևի համար կան ամեն տեսակ դիւրութիւններ:

Այս տողերով մենք նոր բան չենք ուզում ասած լինել, այլ առաջարկում ենք այն, ինչ որ օտար հասարակութիւններ ժամանակներից ի վեր արդէն գործադրում են և հասել են խիստ գոհացուցիչ հետևանքների: Իսկ եթէ մեր աղքատները մինչև այժմ էլ ձգուած են փողոց և նրանցից շատ-շատերը ապրում են ամենաթշուառ վիճակի մէջ, դրա պատճառը մեր չունևորութիւնը չէ, այլ բացարձակ անտարբերութիւնն ու անզգայութիւնը, որոնք ստիպում են մեզ ամեն անպատուութիւն տանել…

---

*Սեպտեմբերի 1-ից ց31 դեկտեմբերի բաժանորդ գրուողը վճարում է 4 ր. 50 կ.:*

---

## ՔՐՈՆԻԿՈՆ

— Օգոստոսի 25-ին Բաթումում տօ-

---

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՍԱՌԱ

Բ.*)

—Ուսումնարանից դուրս եկանք վերջապէս «քաջալաւ» և «գերազանց» թուանշաններով: Տունը մեզ տաղտկացնում էր, և մենք սկսեցինք փողոցներում այդ տաղտուկը փարատելու միջոցներ փնտռել: Չէր անցնում մի օր, որ ես և Սառան թէանցուկ ժամի վեցին կամ եօթին դուրս չգայինք տանից և չվերադառնայինք տասն ժամին: Բացի ցեխ և անձրևային օրերից մենք գրեթէ միշտ լինում էինք Պերայի Մեծ-Փողոցի մայթերի վրայ և վերադառնում էինք տուն մեծ բաւականութիւն ստացած: Որքա՜ն նորանոր յուզումներ էինք կրում մենք տանը, մեր ննջասենեակներում առանձնացած, երբ մտածում էինք մեր անցկացրած օրուայ մասին: Շատ անգամ հայելու առաջ կանգնած ժպտում էինք, և մեր պատկերի ժպիտը մեզ թւում էր այն ծանօթ կամ անծանօթ երիտասարդի ժպիտը, որ այդ օրը մեր ուշադրութիւնն էր գրաւել: Եւ յիրաւի ինչպէս կարելի էր չյուզուել, երբ Մեծ Փողոցում պատահում էին մեզ այնպիսի բաներ, որոնք դրդռեցնում էին մեր ջղերը: Պատահում էին մեզ ամեն օր անծանօթ պարոններ, որոնք մեզ ժպտում էին ու անուղղակի ակնարկութիւններ անում: Պատահում էին ծանօթ երիտասարդներ, որոնք մեզ բարևում էին կատարեալ երկիւղածութեամբ և կոտրատւում էին մեր շուրջը պտոյտ-պտոյտ անելով: Մերթ սրիկաները կոպտութեամբ և ցաւցնելու չափ սեղմում էին բազմութեան մէջ մեր բազուկներն ու անցնում, մերթ մանկահասակ աշակերտներ փնջեր էին ներկայացնում մեզ հոտոտելու, քսւում մեր շորերին և ծիծաղելով հեռանում: Շատ անգամ լսում էինք հաճոյախօսութիւններ, որ շոյում էին մեր ականջները և բացականչութիւններ, որ դողացնում էին մեր սիրտն ու կարմիր ներկում մեր այտերը:

—Combien elles sont belles (որքա՜ն գեղեցիկ են), լսում էինք միշտ և շատ անգամ՝

—Combien eles sont laides (որքան տգեղ են), fi donc!...

Այնուամենայնիւ այդ բոլորը մեզ գոհունակութիւն էին պատճառում, և հպարտանում էինք այն մտքով, որ մեր վրայ ուշադրութիւն են դարձնում: Եւ սիրտներս բաբախում էր ու մեզ ստիպում միմիանց յայտնել մեր զգացածը: Մենք յաճախ հեռանում էինք Մեծ-Փողոցի մայթերի վրայից ուղիղ ժամի 9-ին, երբ մեծ խանութները փակւում էին: Մինչև Կալիօնճի-Կուլլուկ մեր տան առաջ հասնելը՝ Սառան որքան երջանիկ բաների մասին էր խօսում, ինչպիսի երջանկութիւն էր երազում, այդ չեմ կարող բացատրել:

Բայց ամեն օր ուրախ չէին մեր յուզումները, որոնք երբեմն մեզ ստիպում էին միմիանցից սառնութեամբ բաժանուել: Այդ պատահում էր այն օրերը, երբ մարդիկ աւելի ուշադիր էին լինում դէպի ինձ և Սառայի հասցէին անհաճոյ ակնարկութիւններ անում: Այդ գիշերները Սառան դժգունում էր, վրդովւում և երկրորդ օրն աւելի ճոխ ու աւելի ճաշակաւոր հագնուած գալիս ինձ մօտ Մեծ-Փողոց գնալու համար, ուր հպարտութեամբ նայում էր իւր շուրջը, ժպիտներ սփռում ամեն կողմ և երբեմն երբեմն նայում ինձ վրայ, որ շատ հասարակ հագնուած քայլում էի նրա կողքով և լսում նրա սրախօս անեկդոտները, բայց շուտով նա կրկին խեղճանում էր, տարազը կորցնում իւր նորութիւնը նրա աչքում, երբ լսում էր դարձեալ անհաճոյ ակնարկութիւններ: Երկրորդ օրը նա փորձում էր աւելի ճաշակաւոր հագնուել, և նոր հագուստը դարձեալ կորցնում էր նորութիւնը: Եւ այսպէս շարունակւում էր տարին տասներկու ամիս և ոչ ոք նրա վրայ ինձանից աւելի ուշադրութիւն չէր դարձնում:

Մի օր նոյնիսկ մի համարձակախօս պարոն ասաց.

—Աջ կողմինը սիրուն է, բայց ձախը լաւ պատառ է, 5000 ոսկիանոց քսակներ չափ է փչում. նրան տանողը լաւ կը զուարճանայ օտարների հետ:

Լսելով այդ խօսքերը Սառան տեղը փոխեց, ձախ կողմը ինձ տուեց ու անցաւ աջ կողմը:

Իսկ համարձակախօս պարոնը իւր ընկերոջ հետ ծիծաղեց:

Մեզ մնում էր արագ քայլերով հեռանալ Մեծ-Փողոցից այդ օրը սովորականից շուտ:

Չեմ իմանում ինչու, մեր սեռի ընկերներն այնքան մտերիմ չեն լինում միմիանց հետ, որքան տղամարդիկ: Ես շատ բաներ էի թագցնում Սառայից, նա էլ բնականաբար ինձանից էր թագցնում: Գուցէ նա ստանում էր սիրային նամակներ կամ գուցէ ունէր երիտասարդ սիրահար: Երբեմն նրան տեսնում էի չափազանց ուրախ, նա ինձ համբուրում էր երկու րոպէն մի անգամ, նայում հայելու մէջ, ժպտում ու ասում. «Ես շատ գեղեցիկ եմ, Սոֆի, այնպէս չէ…»: Երբեմն էլ շատ տխուր էր լինում, ոչինչ չէր խօսում, հագնւում էր սովորականից աւելի լաւ և երբէք հայելու մէջ չէր նայում, իսկ երբ նրա տխրութեան և լռութեան պատճառն էի հարցնում, ասում էր թոյլ ձայնով. «Տգեղ եմ…» և ծիծաղում անբնական ծիծաղով, ապա կանգնում ոտի, ուղղում հասակը, շորերը, սանրում մազերը հայելու առաջ և աւելացնում. «այնուամենայնիւ ինձ թւում է, որ գեղեցիկ եմ... այո, գեղեցիկ եմ…» Երկու դէպքերումն էլ ես կասկածում էի մի բան և նրան հանգստացնելու համար հաւատացնում, որ ինքը գեղեցիկ է և շատ գեղեցիկ: Նա յանկարծ փաթաթւում էր վզովս ու անդադար համբուրում ինձ, ես ի զուր փորձում էի նրա ձեռից ազատուել, նա բաց չէր թողնում գլուխս: «Այո՜ ես գեղեցիկ եմ» կրկնում էր նա մերթ հպարտ ուրախութեամբ, մերթ թերահաւատութեամբ ու ժպտում գեղեցիկ, վայելուչ, հեգնական. շատ անգամ էլ դառը ժպիտով: Անցնում էր մի քառորդ ժամի չափ, նա մոռանում էր կամ ձևացնում էր, թէ մոռացել է իւր ուրախ կամ տխուր յուզումները, և սկսում էինք մեր սովորական խօսակցութիւնը, որը, սակայն, միշտ նոր էր, միշտ հետաքրքրական և մեզ երբէք չէր ձանձրացնում: Ժամի վեցին կրկին ամեն օրուայ պէս գնում էինք Մեծ-Փողոցում զբօսնելու և նա միշտ պահում էր իւր փայլուն, ժպտուն, հպարտ դիմային արտայայտութիւնը, կարծես իւր հետ ոչինչ պատահած չլինէր այդ օրը. մինչդեռ ես շատ տխուր ու ցրուած էի լինում և հազիւ կարողանում էի հասկանալ նրան ու կցկտուր պատասխաններ տալ: Ես մտածում էի նրա գաղտնիքի մասին, որ նա այնքան անգթաբար ինձանից թագցնում էր: Կանայք չեն վստահանում իրար սրտաբաց անկեղծութեամբ վերաբերուել, նրանք կասկածում են միմիանց վրայ, և այդ գուցէ այն սարսափելի նախանձն է, որ սիրոյ հետ հաւասար չափով մեծանում, ուռչում է մեր կրծքի տակ: Շատ անգամ ամենաչնչին մի առիթ պատճառ է դառնում մեր բարեկամութիւնը խզելու մեր նոյնիսկ ամենամտերիմ ընկերուհու հետ, շատ անգամ նրա դրութիւնը մենք ծիծաղելի ենք գտնում և շատ անգամ նրան նախանձում ու տանջւում ենք: Մի այդպիսի ամենաչնչին առիթ էլ եղաւ իմ և Սառայի մէջ առաջ եկող ժամանակաւոր սառնութեան պատճառը: Ահա թէ ինչպէս:

Մի ուսանող Սուլթանական-Լիսէյից ամեն օր երեկոյեան վեց ժամին դուրս էր գալիս ու սպասում ծխախոտի մեծ մագազիններից մէկի առաջ, մինչև մենք հասնում էինք իրեն: Երեք ամիս էր, որ նա մեզ հետևում էր: Երբ իրեն էինք նայում, նա անուշ ժպտում էր, երբեմն հեռուից հեռու ակնարկութիւններ անում. նա չէր փախցնում ոչ մի առիթ մեզ իւր պատրաստակամ ծառայութիւնը ցոյց տալու համար և միշտ կանգնում էր մէջքից ու պատի տակ քաշւում մեզ անցնելու ճանապարհ տալու համար: Սկզբում ես նրա վրայ ուշադրութիւն չդարձրի, Սառան իմ ուշադրութիւնը հրաւիրեց նուել է այդ քաղաքը Ռուսաց Կայսրութեան հետ միացուելու 25-ամեակը։ Ազիզիէ հրապարակում կատարուած հանդիսաւոր մաղթանքից յետոյ Միքայէլեան բերդի կոմենդանտ գեն.-մայոր Ստրադեցկի հետեւեալ ճառն է արտասանել զօրքերի առաջ. «Այսօր մենք տօնում ենք Բաթումի Ռուսիայի հետ միացման 25-ամեայ տարեդարձը։ Ընդամենը 25 տարի սրանից առաջ մեր զօրքերը գեներալ Սվեատոպոլկ-Միրսկու հրամանատարութեամբ վերցրին Բաթումը, որ այն ժամանակ թիւրքական մի փոքր գիւղ էր։ Այժմ գիւղի տեղ մենք տեսնում ենք բարեկարգ քաղաք և նաւահանգիստ։ Գիւղըն այնպիսի մի փառաւոր քաղաք և նաւահանգիստ կարող էր դառնալ և իսկապէս դարձել է միայն Աստուծոյ օրհնութեամբ և Աստուծոյ Միահեծան Ընտրեալի ու Օծեալի՝ Թագաւոր Կայսրի կամքով։ Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսր Նիկոլայ Ալէքսանդրովիչին և Նորին Կայսերական Մեծութիւն Թագուհի-Կայսրուհիներ Ալէքսանդրա Ֆէոդորովնային և Մարիա Ֆէոդորովնային ուռա՜»։ Այս խօսքերին ի պատասխան թէ զօրքերը և թէ մաղթանքին հաւաքուած բնակչութիւնը թնդացրել է օդը անհեղագոչ ուռայով։

---

*) Տես «Նոր-Դար» № 152

— Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը ցանկութիւն էր յայտնել Թիֆլիսում գտնուած հասարակաց գրադարանն իր տեսութեան տակ առնելու կառուցանելով այդ հաստատութեան համար յատուկ շէնք և հոգալով նրա պահպանման ծախքերը։ Ներկայումս Թիֆլիսի նահանգապետի պաշտօնակատարը յայտնել է քաղաքագլխին, որ լուսաւորութեան մինիստրութիւնն համաձայն է գրադարանը յանձնել Թիֆլիսի քաղաքային վարչութեան տեսութեանը, սակայն այն պայմանով, որ գրադարանապետ նշանակելու գործը կախուած լինի լուսաւորութեան մինիստրութիւնից, որին և պիտի ներկայացուեն գրադարանի գործունէութեան տեղեկագրերը։ Եթէ քաղաքը համաձայն է այս պայմանով ընդունելու գրադարանը, ապա նա պիտի ներկայացնի գրադարանի կանոնադրութիւնն ի հաստատութիւն լուսաւորութեան մինիստրի։

— Օգոստոսի 25-ին Զուչում սպանուած և կողոպտուած է տեղական հարուստներից մէկը—Միքայէլ Թամիրեան։ Սպանութիւնն, ասում են, խորհրդաւոր բնաւորութիւն ունի։

— Առեւտրական կրթութիւնը տարածող Մոսկուայի ընկերութիւնն առաջիկայ սեպտեմբերի կիսին բաց է անում առեւտրական բարձրագոյն դասընթացները։

— Ռուսիայում հիմնւում է պետական և հասարակական ծառայութեան մէջ գտնուող անձերի փոխադարձ օգնութեան համառուսական ընկերութիւն, որի մի ճիւղը բացուելու է նաև Թիֆլիսում։

— Ադրիանուպոլսի վիլայէթում, որը, մակեդոնական ներկայ ապստամբութեան կեդրոնից մէկն է, «Times»-ի թղթակցի ասելով, ապրում է 30,000 հայ մէկ միլիոն բնակչութեան մէջ։

— Երկրագործութեան և պետական կալուածների մինիստրութիւնը ռուսաց այգեգործական Կայսերական ընկերութեանը թոյլ է տուել այս տարի չերմապահական ցուցահանդէսներ բանալու, ի միջի այլ տեղերի, Նուխի քաղաքում և Աղդամ գիւղում։

— Խմբագրութիւնս ստացաւ հետեւեալ նորագոյն հրատարակութիւնները. 1) Ա. Արարաջեան—«Տարրական քերականութիւն հայոց աշխարհաբար լեզուի» մասն առաջին, Ալէքսանդրապոլ, 2) «Լիակատար ցանկ պիեսների, որոնք հայերէն լեզուով ներկայացնելու թոյլ տրուած են կովկասեան չըրջանի բեմերի վրայ», հրատ. «Թատրոն» հանդէսի, Թիֆլիս. 3) П. М. Корханиди —«Живое слово», Элементарный учебникъ русскаго языка по наглядно-переводному методу для армянскихъ училищъ. Выпускъ первый. Тифлисъ.

## ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ՃԱԼԱ գիւղից,—Մեր գիւղի ծխատէր բարեկրօն Ստեփաննոս քահ. Պապայեանի հրաւիրանօք՝ Անիից այստեղ եկաւ պ. Բասմաջեանը և լուսանկարեց մեր գերեզմանատանը գտնուած Անւոյ հին խաչքարերը։ Ամենից նշանաւոր է մի հին գերեզմանաքար, որը բերուած է Անիից և որի վրայ շատ նուրբ կերպով քանդակուած են մի ձիաւոր և երկու կողմից մարդկանց պատկերներ։ Վերոյիշեալ գերեզմանաքարը բագրատունեաց ժամանակուայ գործ է և մինչև օրս անուշադիր ընկած էր մեր գերեզմանոցում։ Բացի այդ հնութիւններից, Բասմաջեանը պիտի լուսանկարէ մեր եկեղեցու 500 տարուայ Աւետարանի խուցուրեան տառերով գրուած յիշատակարանը այդ Աւետարանը գրուած է Արծկէ քաղաքում։

## ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ

Ֆինանսների նախկին մինիստր Ս. Իւ. Վիտտէի իր պաշտօնից հրաժարուելու առիթով Гражданинъ-ը, ի միջի այլոց, գրում է հետեւեալը.

> Բունգէն հեռացաւ ֆինանսների մինիստրի իր պաշտօնից, յայտարարելով, որ Ռուսիայի եկամուտի բոլոր աղբիւրները ցամաքել են...
>
> Բայց գոնէ մի հատիկ թշնամի ունէր նա։
>
> Ոչ մի հատ, ոչ մի տեղ...
>
> Հեռանում է Վիտտէն տասն և մէկ տարուայ աշխատանքից յետոյ, որը հաստատուած էր դէպի Ռուսիայի հզօրութիւնն ունեցած հաւատքի վրայ։ Հեռանում է նա հրապարակ բերելով համարեա երկու միլիարդ բուրլու հասնող տեղեկագիր, ոչ միայն առանց բացի, հապա նոյն իսկ մնացորդ ունենալով։ Ռուսական արժէթղթերի վարկը արտասահմանում նա բարձրացրել է չտեսնուած բարձրութեան, պետական ընդհանուր բարեկեցութեան զարգացման տուել է մի շարք նոր միջոցներ և իր անձնական աշխատանքով թեթեւացրել շատ-շատերի կեանքի պայմանները. սակայն, այնքան շատ են նրա թշնամիները, որ կարելի է բացարձակապէս ենթադրել, թէ տասնմէկ տարուայ ընթացքում բացի վնասից, Ռուսիային ոչ մի օգուտ չէ տուել...
>
> Այդպէս են, երևի, մարդկութեան օրէնքները...

Իշխան Վ. Մեշչերսկին, եզրափակելով իր խօսքը, աւելացնում է.

> Մի բարի կին այս անակնկալ փոփոխութեան առիթով սրտի դառնութեամբ ասում էր, թէ այն աստիճան այդ բանը անսպասելի էր, որ մի օր առաջ անգամ ոչ ոք այդ մասին տեղեկութիւն չունէր և ոչ ոքի մտքից իսկ չէր անցնի այդպիսի մի կասկած...
>
> Աւելորդ չեմ համարում այս առիթով առաջ բերել հետեւեալ պատմական փաստը. ես յիշում եմ,—ասում է իշ. Մեշչերսկին, որ 1892 թ. Ս. Վիտտէի ֆինանսների մինիստր նշանակուելուց անմիջապէս յետոյ, նա դրուած էր բաւական յարմար դրութեան մէջ, որովհետև պետական գանձարանում եղած պատրաստի դրամը չէր բաւականանում ռոճիկները վճարելուն։
>
> Անցաւ դրա վրայ տասնմէկ տարի, և Ս Վիտտէն այսօր գանձարանը յանձնում է իր յաջորդին 240 միլիոնի կանխիկ դրամով, անցեալ տարիների ու այս տարուայ բոլոր ծախսերը ծածկելուց յետոյ։

⁂

Նուազ հետաքրքրական չէ նաև Ս. Վիտտէի մասին ֆինանսների նախկին մինիստր Ի. Վըշնեգրադսկու յայտնած կարծիքը։

> «Ս. Իւ. Վիտտէն,—ասել է Վըշնեգրադսկին,—եռանդուն, արթուն, իսկ որ գլխաւորն է, թարմ մարդ է, նա վերցուած է կենդանի գործից և ճանաչում է միայն կեանքը և ոչ դիւանատունը։ Նա չի հասկանում, թէ ինչ բան է չինովնիկութիւնը և չի էլ գրաւուած նրանով։ Նրա ոյժերը ծածկուած չեն այն թմրեցուցիչ ժանգով, որը չինովնիկական ասպարէզի անխուսափելի հետեւանքն է կազմում, սկսած ամենաստորից մինչև ամենաբարձր աստիճանն ու պաշտօնը։ Ասում են, թէ իբր մենք երկուսս էլ երկաթուղիական ենք. և թող որքան ուզում են ասեն։ Սակայն, թող չասեն միայն, որ մենք չինովնիկներ ենք,—սուտ կլինի այդ։ Բայց որ մենք երկաթուղիականներ ենք —այդ միանգամայն ճշմարիտ է։ Այդ նշանակում է, թէ մենք շատ լաւ ենք հասկանում երկաթուղային գործը, որի մասին ունեցած մեր գիտութեամբ մեզ յանձնուած պաշտօնների մէջ պետութեան համար օգտակար ծառայութիւն միայն կարող ենք ունենալ։

## «ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ» Կ. ՊՈԼՍՈՒՄ

Վ. Դորոշևիչը շարունակում է*)

Յոյները, ալբանացիները, վալաքները, սերբերը, բուլղարները,— բալկանեան բոլոր ազգութիւնների ներկայացուցիչները,—որոնք իրենց հայրենիքում այնպիսի գործեր են լինում կատարած, որոնց համար պէտք է նրանց կախել կամ բանտ նստեցնել, փախչում գալիս են Ղալաթիա, ապրում են այստեղ, առեւտուր են անում։ Եւ շնորհիւ պասպորտային սիստեմի, թագնւում են կատարելապէս ապահով։

Անցագիր ձեռք բերելուց էլ հեշտ բան չկայ։

Վարձում են 50 բանուոր, օրինակ, Իզմիր տանելու համար։ Նաւ են նստեցնում նրանց, գրաւական են վերցնում անցագրերը,—և ահաւասիկ պատրաստ է 50 անցագիր։ Բանուորները գնում են, անցագիրը մնում։ Անցագիր չունեցող բանուորներին այնտեղ, Իզմիրում, բանտ կնստեցնեն,—իսկ 50 անցագրով կարելի է շատ բան անել։

Հապա մի փորձեցէք նրան ձեռք տալու, երբ նա ամենաօրինաւոր քաղաքացի է։ Անցագիր ունի։

— Համեցէք։ Ա՛յ ես ով եմ։

Յոյները, ալբանացիները, սերբերը, վալաքները, բուլղարները, փախստական իտալացիներ Ղալաթիայի բնակիչներն են,—բայց այդ թաղի իսկական հերոսը լևանտացին է։

Ոչ յոյն է նա, ոչ հրէայ, ոչ իտալացի, ոչ ալբանացի, ոչ սլաւեան,—բայց խօսում է ամեն լեզուներով և ոչ մի լեզու էլ կարգին չգիտէ։

Նա չունի իր մայրենի լեզուն, ինչպէս չունի իր հայրենի երկիրը։ Լևանտացիք ապրում են Մարմարեան և Եգէյեան ծովերի ափին և Միջերկրականի արևելեան մասում. Բայց նրանց մայրաքաղաքը Ղալաթան է։

Ուր էլ որ ապրելու լինի լևանտացին, Ղալաթայի մասին կխօսի այնպէս, ինչպէս եւրոպացին Պարիզի մասին։

— Ղալաթա՜ն։ Ա՛յ թէ որտեղ են ապրում։

Լևանտացու մէջ ինչ արիւն ասես՝ խառն է—թիւրքական, սլաւոնական, յունական, հրէական, իտալական։ Նրա նախնիքների մէջ կան և ծովային, և ցամաքային աւազակներ, և աքսորականներ։ Խիստ հարուստ ժառանգութիւն։

Լևանտացին ամբարել է իր մէջ այն բոլոր արատները, որոնք յատուկ են թէ ասիացի և թէ եւրոպացի ազգութիւններին։

Նրա համար գոյութիւն ունի միայն երկու հասկացողութիւն՝

—«Կարելի է վաստակել» և «ոչինչ չես վերցնիլ»։

«Ազնիւը» և «անազնիւը» գոյութիւն չունի։

Ամեն բան նա «առեւտուր» է անուանում և մինչև անգամ երբ պէտք է մարդ մորթել փող «վերցնելու» համար, լևանտացին ասում է՝

— Առեւտուր անելու բան կայ։ Կարելի է վաստակել։

Եւ երբ լևանտացին ասում է ձեզ «առեւտուր» եմ անում, խիստ դժուար է որոշել, թէ իսկապէս ինչով է զբաղւում նա—կրօնական պաշտամունքի առարկաներ է ծախում արդեօք (Ղալաթայում խիստ տարածուած է այս առեւտուրը), կանանց մարմին, թէ գիշերները թալանում է մարդկանց փողոցներում։ Կամ թէ այս երեք պարապմունքներն էլ միացնում է իրար հետ։

Ձիթագոյն դէմք, կպրի պէս սև մազեր, կարմիր արիւնով ներկուած վառւող շրթունքներ, մեծ, գիշակեր, սպիտակ, փայլուն ատամներ, աչքերի դեղին սպիտակուցներ,—լևանտացին գեղեցիկ է մանաւանդ այն ժամանակ, երբ փոխադարձաբար չափում է պատահած առնաւուտին ոտից ցգլուխ։

Առնաւուտը «սիրում է» լևանտացուն։ «Լաւ լևանտացին» լաւ առնաւուտի համար լաւ վաստակ է։

Բայց երէկ մութ անկիւնում մի լևանտացու խեղդելուց և կողոպտելուց յետոյ, առնաւուտը իր կողոպուտը մաստիկի է տալիս և ծախում կանանց վրայ մի ուրիշ լևանտացու մօտ։

Ահա թէ ինչու հանդիպելիս նրանք այդպիսի փոխադարձ սիրալիր հայեացքներ են ձգում իրար վրայ։

Առնաւուտն ախորժակով է նայում լևանտացու ամենակեղտոտ փողպատի մէջ խրուած շողակնեայ քորոցին։ Լևանտացին ախորժակով է նայում առնաւուտի թանկագին, շքեղ զէնքին։

— Ա՛յ թէ կլլէի,—մտածում են երկուսն էլ։

Լևանտացու երեսը լուացւում է այն ժամանակ, երբ անձրև է գալիս։ Ձեռքերն երբէք չեն լուացւում, որովհետև, երբ անձրև է գալիս, լևանտացին ձեռքերը գրպանն է կոխում։

Լուացարար կնոջ վրայ Լևանտացին նայում է միայն մի տեսակէտից՝

— Չէ՞ կարելի արդեօք սրան ծախել։

Որ լուացարար կինը կարող է և սպիտակեղէն լուանալ,—այսպիսի բան չի անցնում լևանտացու մտքով։

Լևանացին հագնւում է անպատճառ «ըստ եւրոպականին»։ Նա հպարտութեամբ ասում է՝

— Մենք եւրոպացի ենք։

Ման է գալիս օսլայած շապիկով։ Բայց այդ շապիկը հանում է այն ժամանակ, երբ նորն է գնում։

Արևելեան այսպիսի կեղտոտութեան մէջ լևանտացիք զուտ արևելեան էլ սէր ունին դէպի փայլուն թանկագին իրեղէնները։

Փալաս դարձած փողպատի մէջ, որից կարելի է ճարպ հալել, յաճախ խրուած է ահագին շողակն։ Իսկ սևաւունկարմիր թևնոցները (մանժետ), որոնց վրայ թւում է թէ արիւն կայ, ամրացած են յաճախ սոլիտերներով։

Մաշուած ժիլետի գրպանից նա հանում է ոսկեայ ահագին ժամացոյց։ Եւ մարդ ապշում է, երբ Ղալաթայի որևէ սրճա-պոռնկատան մէջ լևանտացին կեղտից սևացած ձեռքերով թափում է ոսկին ուղղակի անհաշիւ։

Թերևս, այնտեղից մի-երկու քայլ հեռու, խուլ փողոցում, հէնց նոր...

Լևանտացիք խիստ ընդունակ ժողովուրդ են։ Քաղաքականութեամբ զբաղուելիս խիստ առաջադիմում են նրանք։ Վաճառականութեան մէջ միլիոններ են շահում։

Բայց ինչքան էլ որ բարձրանայ լևանտացին,—խառն արիւնը, որի մէջ եռում են Արևելքի և Արևմուտքի բոլոր արատները, քաշում են նրան ներքև։ Նա մնում է իբրև անասուն, միաժամանակ կոպիտ և խորամանկ անասուն։ Կոպիտ և խորամանկ է դառնում նրա ամբողջ գործունէութիւնը և կեանք։

Դիպուածով ես վկայ եղայ մի միլիոնատէր-լևանտացու ընտանեկան դրամի։

Որ նայում էիր կեանքի կէսը Լոնդոնում և Պարիզում անցկացրած այդ եւրոպացի գեղեցիկ ծերունուն, ամենևին չէիր կարծիլ, թէ նրա մէջ կարող է որևէ ասիական բան լինել։ Արտաքինը—ձևը, գեղեցկութիւն և ազնուութիւն էր։ Կրթութիւնը կատարեալ։ Հանգուցեալ կնոջից ունեցած զաւակները կրթւում էին Զուիցերիայում ամենաարիստոկրատ մի պանսիոնում։

Եւրոպայում իր կատարած շրջագայութիւններից մէկի ժամանակ նա ամուսնացել էր մի նորատի, զարմանալի գեղեցիկ, կրթուած և ուսում առած աղջկայ հետ և բերել էր նրան Կ. Պոլիս։

Բանից երևաց, որ «եւրոպացին» այնտեղ հարեմ ունի, և նորատի կնոջը յանձնուած է միայն առաջին կնոջ դերը։ Մարդը ծեծում էր նրան, ամենակատաղի փաշայի պէս։ Ծնողներին գրել նա չէր կարողանում. Նրան պահում էին ըստ ասիականի, կողպած և հսկողութեան տակ։

Բանից երևաց, որ շուրջն ապրում են տիկնայք, հարուստ լևանտացիների կանայք նոյն պայմաններում և հաշտւում են այդ բանի հետ։

— Ախ, գիտէք, այդ լևանտացու սովորութիւնն է։ Նրանք արևելքի մարդիկ են։

Սարսափով և զարմանքով «նորահարսն» իմացաւ, որ իր յարգելի ամուսինը շատ անգամ բանտ է նստել չարամիտ սնանկութիւնների և խարդախութիւնների համար։

Եւ թէ շուրջն ամենքն այդպէս են։

Եւ թէ այդ բանը ոչոքի չի խանգարում։

Բանտի վրայ լևանտացին նայում է մօտաւորապէս այնպէս, ինչպէս մենք

---

նրա վրայ։ Դրանից յետոյ նկատում էի, որ Սառայի և նրա մէջ միշտ ժըպիտների, դիմախաղերի, ձեռնոցախաղերի և թաշկինակների փոխադըրութիւն էին տեղի ունենում։ Մի օր էլ Սաքըզ-Աղաճի փողոցի անկիւնից ծռուելիս նա մի նամակ ձգեց մեր առաջ և առանց յետ նայելու հեռացաւ մինչև Դիւան-Եօլուի անկիւնը, մաիկ արաւ մեզ՝ արդեօք իւր նամակը վերցնո՞ւմ ենք, թէ չէ։ Սառան տենդային շարժումով կռացաւ, գետնից վերցրեց նամակը ու հասցէին աչք գցեց, բայց յանկարծ դժգունեց, դողաց և արհամարհոտ ու նախանձոտ ակնարկը գցելով ինձ վրայ ասաց տհաճութեամբ և կծու չեշտով՝

— Ձեզ համար է գրուած, օրիո՛րդ։

Ես չվերցրի նամակը։ Նա պատռեց գէն շպրտեց, և երկուսս էլ տուն դարձանք։ Ճանապարհին բաժանուեցինք իրարից առանց սովորական «ցըտեսութիւն» ասելու իրար։ Նա նախանձում էր ինձ վաղուց, իսկ այդ օրից սկսեց աւելի շատ նախանձել և խուսափել ինձանից։

Սառան մի քանի օր շարունակ չէր երևում մեզ մօտ, յետոյ սկսեց շաբաթը մի անգամ գալ ինձ տեսնելու, իսկ միասին այլևս զբօսանքի չէինք գընում։ Չորս հինգ ամիս յետոյ ես նըշանուեցի։ Նա ներկայ չգտնուեց ո՛չ իմ նշանադրութեան, ո՛չ էլ պսակադրութեան հանդէսներին։ Նա աւելի ու աւելի սկսեց նախանձել և այնքան ենթարկուեց այդ նախանձի ազդեցութեանը, որ սկսեց այսուայն կողմ տարածել, թէ ես եմ եղել իւր դըժբաղդութեան պատճառը, թէ իրեն հետեւող բոլոր երիտասարդներին ես խելքից հանել եմ իմ չինծու ձևերով և կեղծ խօսքերով և թէ իմ նշանած բժիշկին նախ քան նշանուելս սիրել ու անձնատուր եմ եղել և որ բժիշկը միայն խայտառակութիւնից ազատուելու համար է ամուսնացել ինձ հետ։

Ես լսում էի այս բոլորը լսում ու վրդովւում, ղայրանում, արտասւում. Իմ նշանածն էլ լսում էր բոլորը և ամեն կերպ ջանում էր ինձ հաւատացնել, թէ ինքն ուշ չի դարձնում իւր լսածների վրայ, բայց ես կասկածում էի, որ նա կարող է ենթարկուել վատ ներշնչման, կարող է վատ բաներ մըտածել իմ անցեալի մասին։ Եւ պատմում, հաւատացնում, համոզում էի նըրան, որ Սառան զրպարտիչ, կռուարար աղջիկ է, նրան չպէտք է հաւատալ, հազարաւոր ձեռքով ու բառերով ջանում էի արտայայտել նշանածիս մօտ իմ տանջանքները, և երբ նա հեռանում էր իմ մօտից, ես ընկնում էի մահճակալիս վրայ ու ժամեր շարունակ լաց էի լինում։

Սառան ինձ շատ յուզումներ պատճառեց, բայց և՛ այնպէս ես նրան սիրում էի և թէև նա մեզ մօտ չէր գալիս, սակայն ես նրա մասին շատ բան էի իմանում։ Օրինակի համար, լսում էի, որ նա սարսափելի կերպով լարուած ջղային կեանք է վարում, ամեն գիշեր լինում է ներկայացումներին, ընթրում հիւրանոցում իւր ծնողների հետ, շատ անգամ և՛ առանձին ու մի անծանօթ կամ ծանօթ մարդու առաջնորդութեամբ վերադառնում տուն ուշ գիշերին իսկ օրուայ մնացած մասը նա անց էր կացնում այգիներում կամ իրենց պատուհանի առաջ միշտ en grande toilette, զուգուած, զարդարուած։ Լսում էի, որ նա այլևս այնպիսի ախորժակով չի ուտում, ինչպէս ուսումնարանում եղած ժամանակ և այնքան էլ աշխոյժ ու թեթև չէ, ինչպէս ուսումնարանից դուրս գալիս էր։ Եւ երբ իմ պսակադրութեան հանդէսից հինգ ամիս յետոյ նա մեր տունը եկաւ, ես դժուարացայ նրան ճանաչել և երբ սկսեցի շատ մօտից նայել իր դէմքին, նկատեցի, որ նա շատ լղարել էր և դէմքը կրում էր տանջանքի հետքեր։

(Շարունակելի)

Վ. Թուրեան

---

*) Տես «Նոր-Դար» № 152

նայում ենք հարբուխի վրայ։ Հաճելի չէ, ի հարկէ, բայց անխուսափելի է։ Պաշտպանուել չես կարող։ Տեսնե՞լ էք մի մարդ, որը իւր կեանքում գէթ մի անգամ հարբուխ ընկած չլինի։

Դժբաղդ կինը, վերջի վերջոյ, կարողացաւ մի հնարքով փախչել Եւրոպա այդ «ամենաքստմնելի Ասիայից», իւր միլիոնատէր ամուսնուց։

Ասենք, ինչքան էլ որ ընդունակ են միլիոններ դիզելու կամ հասարակական ամենաբարձր դիրքի հասնելու, լեւանտացիների մեծամասնութեանը, բաղդը բանելիս էլ, խանգարում է ճաշակների ստորնութիւնը։

Ինչ առեւտուր էլ որ ունենայ լեւանտացին, նրա «ամենախոշոր առեւտուրը» կանանց մարմնի առեւտուրն է։ Համ փող է աշխատում, համ քէֆ անում։ Լեւանտացու համար թէ մէկը, եւ թէ միւսը հաւասար չափով կարեւոր դեր է խաղում։ Լեւանտացին սիրում է «ապրել»։ Երբ «առեւտուրն» աջող լինի — ոսկիներ է շաղ տալիս։ Նա առատաձեռն է։ Առատաձեռն ըստ ասիականի։ Արեւելքում առատօրէն շռայլումն առաջին ապացոյցն է ազնուութեան։

Այսպէս է «Ղալաթիայի հերոսը»։

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

### ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

(«Նոր-Դար»-ի թղթակցից)

ԹԵՀՐԱՆ, 2 օգոստոսի.—Ես չսխալուեցի, որ անցեալ թղթակցութեանս մէջ կասկած յայտնեցի Այվազեան արքեպիսկոպոսի Ղարա-Քէաւհրիզի խնդրում բռնելիք ընթացքի վերաբերմամբ. այդ ընթացքն ըստ ամենայնի անգոյն, անհաստատ եւ աննպատակ եղաւ։

Սրբազան առաջնորդ նահանգին աղմուկով Արաղից Թեհրան է ուղարկում Խորէն վարդապետին, որ Ղարա-Քէաւհրիզի կողոպտման եւ հայ կանանց բռնաբարման մասին բողոքէ եւ դիմումներ անէ կեդրոնական կառավարութեանը. միւս կողմից ինքն անձամբ մի շարք հեռագրներով դիմում է թէ Աթաբէգին եւ թէ Մուշիրէ-Դովլէին. երրորդ կողմից օտար դեսպանատները պատրաստակամութիւն են ցոյց տալիս խնդրին միջամտելու։ Խորէն վարդապետը գալիս է Թեհրան, սկսում է դիմումներ անել ուր հարկն է, միւս կողմից Ղարա-Քէաւհրիզի աստանդական եղած դժբաղդ հայ գիւղացիները փողոցներում հանդիպողից օգնութիւն եւ պաշտպանութիւն են աղերսում... Եւ այս բոլորից յետոյ մէկ էլ տեսնենք վրայ է հասնում Այվազեան արքեպիսկոպոսի մի հրամանը, որով սրբ. առաջնորդը Խորէն վարդապետին պատուիրում է խնդիրը թողնել ներկայ անկերպարան վիճակի մէջ եւ վերադառնալ Ղարա-Քէաւհրիզ, որովհետեւ գիւղն աւերակ դարձնող աւազակ Հիշմէթի-Դովլէն սրբազանին խոստացել է կողոպտուած իրերը դարձնել գիւղացիներին, իսկ կանանց պատուին դիպչողներին պատժել։ Սրբազանն աւելացնում է, թէ Բագրատ վարդ. Վարդազարեանն արդէն յետ է ստացել կողոպտուած իրերի մէկ մասը (չնչին մասը), եւ գործը շարունակուելու է այսպէս, մինչեւ որ խնդիրը հէնց սրբազանի եւ աւազակ պրինց Հիշմէթի-Դովլէի միջեւ կարգադրուի։

Լաւ է, ի հարկէ, որ որքան կարելի է այսպիսի խնդիրները խաղաղութեամբ կարգադրուեն, սակայն ընդ սմին պէտք է շատ հեռատես եւ շրջահայեաց լինել։

Բացատրենք մեր միտքը։

Եօթն տարուց աւելի է, որ սրբազան Այվազեանը պաշտօնավարում է Պարսկաստանում եւ այսքան ժամանակամիջոցը բաւական պիտի լինէր լաւ ճանաչելու տեղական պայմաններն ու սովորութիւնները, մանաւանդ Պարսկաստանի պէս մի երկրում, ուր չկայ օրէնք, կարգ ու կանոն, ուր իշխում է լոկ «զոռը» եւ իշխանութեան ու արդարութեան նոյնակն է «տեռորը»։ Սրբազանը պիտի հասկանար, որ եթէ Հիշմէթի-Դովլէն համաձայնում է իւր կողոպուտը յետ դարձնել, այդ ոչ թէ հայոց առաջնորդի «խաթեր» համար է, այլ նրա համար, որ մի հայ վարդապետի Թեհրան գալուն եւ անձամբ բողոքելուն կարեւորութիւն է տալիս եւ վախենում է, որ ինքը կպատժուի։ Բայց այժմ, երբ Խորէն վարդապետը վերադառնում է Ղարա-Քէաւհրիզ առանց մի վճռական հրամանի, սրբազանը պիտի տեսնէ, որ Հիշմէթի-Դովլէն մոռացել է իւր խոստումները... Իսկ այդ դէպքում նորից դառնալ Թեհրան եւ բողոքել կեդրոնական կառավարութեանը—արդէն շատ ուշ կլինի եւ աննպատակ։ Զիջումները միշտ կորստաբեր են եղել մեր ազգի համար...

Եթէ մինչեւ անգամ ընդունելու լինինք, որ Հիշմէթի-Դովլէն կատարէ իւր խոստումները, ինչպէս պիտի վերականգնէ նա արդեօք բռնաբարուած կանանց պատիւը։ Արդեօք մի աւազակապետ այնքան արդար խղճմտանք տէր կլինի, որ իւր յանցաւոր ստորադրեալների հետ վարուի արդարութեամբ եւ իրենց արժանի պատիժը տայ նրանց։ Արդեօք այսպիսի բանի հաւատալը միամտութիւն չէ։ Արդեօք առանց շահի եւ Աթաբէգի վճռական հրամանի Հիշմէթի-Դովլէն եւ սրբազան առաջնորդը կարո՞ղ են օրինական պատժի ենթարկել հայ կանանց պատուին ձեռք երկարացնող տասնեակ սրիկաներին։

Սրանք հարցեր են, որոնց պատասխանը սրբազան Այվազեանից պիտի սպասել։

Այս խնդրին նուիրած անցեալ թղթակցութեանս մէջ ասել էի, որ այս խայտառակ թալանի եւ կանանց բռնաբարուած պատուի համար հատուցում պահանջելով միայն կարելի է ապահովել պարսկահայերիս ապագան, եւ այդ հատուցումը ստանալու համար պիտի լինել հաստատակամ։ Նոյնը կրկնելով այժմ, պիտի ասեմ, որ սրբազան Այվազեանի Ղարա-Քէաւհրիզի խնդրում ցոյց տուած թուլութիւնը խեղճ հայ գիւղացիներին պիտի մատնէ ապագայ աւելի մեծ թշուառութեան. Հիշմէթի-դովլէի պէս հազարաւոր սոված աւազակներ երես առած պիտի կրկնեն Ղարա-Քէաւհրիզի դէպքն աւելի մեծ ծաւալով, թալանելով հայ գիւղերը, անպատուելով հայ կանանց եւ հարսներին...

Ցաւ ի սիրտ պիտի խոստովանենք, որ Այվազեան արքեպիսկոպոսի մասին յուսախաբուած ենք։ Սրբազանն այլ եռանդ ու գործունէութիւն էր ցոյց տալիս վարդապետ եղած ժամանակ եւ այլ գործունէութիւն է ցոյց տալիս այժմ։ Եւ չգիտենք ինչի վերագրենք այդ,—ծերութեան, թուլութեան, թէ մի այլ բանի... Այսքանը միայն կարող ենք ասել, որ եթէ Բագրատ վարդ. Վարդազարեանը սրբազան Այվազեանի պակասութիւններին անտարբեր մնար եւ ամեն ուրեք չհսկէր նրա գործունէութեանը, այսօր մեր հասարակական գործերը միանգամայն տակն ու վրայ եղած պիտի լինէին։

Սրբազան Այվազեանն իւր եօթնամեայ պաշտօնավարութեան ընթացքում Պարսից կառավարութիւնից ստացել է III, II եւ I կարգի շքանշանները, իսկ եթէ մի անգամ էլ Թեհրան գայ, պիտի ստանայ I կարգի ականակուռ շքանշանը*)։

Սատուրն

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

### ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ ՄԱԿԵԴՈՆԻԱՅՈՒՄ

Ֆրանսիական «Paris Nouvelles» թերթի Մոնաստիրի թղթակիցը հաղորդում է, որ թիւրքերն ու ալբանացիները արձակ, համարձակ փողոցներում ծախում են այն բոլորը, ինչ որ յափշտակել են քրիստոնեայից։ Նրանց ի վաճառ հանած ապրանքները շատ զանազանատեսակ են, սկսած հագուստեղէնից մինչեւ զէնքերի զանազան տեսակները։ Դժուար է, աւելացնում է թղթակիցը,—ռեֆորմների մասին խօսք անգամ անել, երբ ապստամբների ձեռքից խլուած զէնքերը ծախւում են նոյն իսկ նահանգապետի աչքի առաջ։ Այս բոլորը, սակայն, թիւրք կառավարութեան չի արգելում հիւպատոսների ականջներին կրկնել. թէ զօրքը պահւում է խիստ կարգապահութեան տակ եւ թէ բռնութիւններ կատարողը միմիայն բուլղարներն են։ Թիւրք իշխանութիւնները ապստամբներին յայտարարել են, որ եթէ վերջիններս զէնքը վար չդնեն, բոլոր քրիստոնեաների գիւղերը պէտք է հրդեհուեն։ Կոտորածը արդէն սկսուած է։ Այրուել է տասնեհինգ գիւղ, որոնց մէջ կան թէ բուլղարական եւ թէ յունական գիւղեր Մոնաստիրի վիլայէթում, ուր 800 հազար բնակիչ են հաշւում, ուստի պաշարեղէնը հազիւ կարող է երեք շաբաթ միայն բաւականութիւն տալ։ Շատերը սովամահ են լինում։ Չթաղուած դիակները փթում են տների մէջ։

### ՍԵՐԲ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆՆԵՐՆ ՈՒ ՄԱԿԵԴ. ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Սերբիական «Штампа» թերթում տպուած է սերբ բարձրաստիճան մի զինուորականի մակեդոնական ապստամբութեան վերաբերող մի յօդուած, ուր, միջի այլոց, ասուած է։

«Մակեդոնիայում ծագած ապստամբութիւնը օր ըստ օրէ աճում է։ Հարստահարուած, տառապած եւ յուսահատութեան ծայրը հասած ժողովուրդը ոտքի է կանգնել, ինչպէս մի մարդ, որը իւր վերջին ճիգերը թափելով, աշխատում է կամ տիրանալ իւր ազատութեան եւ կամ բնաջինջ լինել բոլորովին։ Այդ ժողովուրդը կռւում է թիւրքերի, ալբանացիների, մինչեւ իսկ «քաղաքակրթուած» յոյների դէմ... Եւ ոչ ոք չի ուզում նրան օգնութեան ձեռք կարկառել... Եթէ նրան չօգնեն Բուլղարիան, Սերբիան եւ Ղարադաղը, ո՞ւմ վրայ կարող է նա, ուրեմն, յոյս ունենալ։ Համաձայն ու բոլորովին համոզուած կերպով կարող ենք ասել, որ Մակեդոնիայի սլաւոնական ժողովուրդը իսպառ ջնջուելուց ազատողը կարող է լինել միմիայն Բուլղարիայի, Սերբիայի ու Ղարադաղի միացած ու միահոգի միջամտութիւնը։ Մենք չպէտք է պատերազմից վախենանք... Մանաւանդ, մենք, սերբերս, ուրախ պէտք է լինենք պատերազմ հրատարակուելուն։ Այն բոլոր տարաձայնութիւնները, թէ մենք պատերազմի համար պատրաստ չենք, որովհետեւ երկրի ֆինանսական վիճակը անձուկ է,—ծոյլ ուղեղների ունեցած երեւակայութիւնն է։ Ինչ վիճակի մէջ էլ որ լինեն մեր ֆինանսները, թիւրքականից երբեք չեն կարող աւելի վատ լինել. ընդհակառակը, մեր դրութիւնը շատ աւելի լաւ է, քան նրանցը։ Զօրքի կողմից եւ՝ համեմատութեամբ թիւրքերի՝ շատ աւելի նպաստաւոր դիրքի մէջ ենք գտնւում. մեր զինուորականները գերազանցելի են նրանցիններից եւ աւելի լաւ են զինուած»։

Եզրակացութեան մէջ կապիտան Պաւլը հրաւէր է կարդում բուլղարիային, Սերբիային եւ Ղարադաղին՝ որպէս սլաւոն եղբայրակիցներ՝ միացած ոյժերով կռուել մակեդոնական քրիստոնեաների ազատութեան համար։

### ԽԱԼԻԼԸ ԿԱԽԱՂԱՆԻ ՎՐԱՑ։

«Ասսիր» թերթը, խօսելով Ռոստկովսկուն սպանող ժանդարմի մահուան վճիռը գործադրուելու մասին, յայտնում է, որ Խալիլը պատժից առաջ ասել է. «Ես յանցաւոր չեմ։ Եթէ սուլթանը կամենում է, որ ես անձս զոհաբերեմ,—ես խոնարհւում եմ, սակայն, ուզում եմ մի խոստովանութիւն արած լինել...» Նրան թոյլ չեն տուել խօսքը վերջացնելու, չուանը անմիջապէս վիզը անցնելով։ Ենթադրում են, որ Խալիլը ուզեցել է յայտնել իւր համախոհներին։ Թիւրք ժողովուրդը խումբ-խումբ գնում են նրա գերեզմանի վրայ եւ մարդասպանի գերեզմանը ծածկում են ծաղիկներով։

### ԴՐՈՒԹԻՒՆԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

Ահա թէ ինչպէս է նկարագրում «Information» թերթի Կ. Պօլսի թղթակիցը Թիւրքիայի ներկայ դրութիւնը։

«Ներկայ րոպէներում Թիւրքիայի անցած ճգնաժամը աւելի եւ սուր կերպարանք է ստանում տգատամիտ կառավարութեան բացարձակ բացակայութեան պատճառով։ Ամեն բան գնում է դէպի պետական անկում։ Բողոքի կամ անբաւականութեան ոչ մի խօսք, ոչ մի շարժում չի լինում տիրող այն խայտառակ դրութեան դէմ, որի մէջ ներկայումս գտնւում է տէրութիւնը։ Ճակատագրականութիւնը հուժկու ձեռքով ճնշում է երկիրը եւ մատնում նրան բացարձակ ուժասպառութեան։ Երիտասարդ թիւրքերի կուսակցութիւնը, որի վրայ այնքան յոյսեր կար դրուած, թւում է, թէ վերջ է տուել իւր գոյութեանը։»

### ՑՈՅՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՈՏՆՁԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ։

Ֆրանսիական «Temps»-ը ասում է, որ յունական կառավարութիւնը մեծ պետութիւններին ուղարկելու համար պատրաստում է մի մեմորանդում, որի մէջ նա առաջ է բերելու բուլղար հրոսակախմբերի՝ մակեդոնական յոյների վրայ գործ դրած բռնութեան մի շարք դէպքեր իրենց մանրամասնութիւններով։ Այդ պաշտօնական թղթի մէջ պէտք է յիշատակուեն անուն-անուն բոլոր յոյն զոհերը, եւ այն տեղերը, ուր նրանք սպանուել են, նմանապէս եւ ցոյց պէտք է տրուեն այն բոլոր յոյն ագարակները, ուսումնարանները, գիւղերն ու եկեղեցիները, որոնք հրձիգուած են բուլղար ապստամբների ձեռքով։ Մեմորանդումը պէտք է կազմուի բուն իսկ տեղում Մակեդոնիայի յոյն հիւպատոսների ձեռքով հաւաքուած ու ստուգուած տեղեկութիւնների հիման վրայ։

— Կանեայից ստացուած տեղեկութիւնների համաձայն, Կրետէի քաղաքային պատերազմին մասնակցող խմբերի պարագլուխները պատրաստակամութիւն են յայտնել՝ ի պահանջել հարկին՝ միքանի խմբեր կազմելու մակեդոնական յոյներին օգնութիւն հասնելու համար, այն դէպքում, երբ Թիւրքիան անկարող լինի նրանց պաշտպանել բուլղար ապստամբների հալածանքների դէմ։

### ՍԵՐԲԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ։

Բելգրադից «Petit Bleu»-ին հեռագրում են, որ Պետր թագաւորը Կրագուեվացում սերբ զինուորականներին ընդունած ժամանակ, ի միջի այլոց, ասել է, «Շատ ծանր ժամանակների մէջ ենք ապրում։ Մեծ իմաստութիւն, եռանդ ու աշխատութիւն է հարկաւոր բաղդաւոր թագաւորութիւն ունենալու համար։ Մեր հայրենիքը, որին, գուցէ, մօտիկ ժամանակներում հարկաւոր գանք, յոյս ունի, թէ բոլոր սերբ զինուորականները կձգտեն հայրենիքին օգտակար լինելուն...

—Բելգրադից հաղորդում են, որ սերբ զօրքի մէջ տիրող անբաւականութիւնը օր ըստ օրէ աւելանում է։ Զինուորները շարքերից փախչելով, անցնում են սահմանը եւ ծածկւում, ուր ոչ փոքր ինչ ապահովութիւն գտնեն։ Մայիսի 29-ի արիւնալի դաւադրութեան մասնակցող զինուորականները դեռեւ չեն դադարում մտածելուց, որ իրենք պէտք եղած կերպով չեն վարձատրուած։ Իսկ միւսները պահանջում են դաւադիրների պատժուելը, յոյս ունենալով, որ առանց նրանց երկիրը աւելի եւ խաղաղ կլինի։

Մի խօսքով՝ բառի բովանդակ նշանակութեամբ ամենքն էլ դժգոհ են։

Զօրքի մէջ տիրող այդ դրութիւնը այնքան յուսահատեցրել է Պետր թագաւորին, որ նա, ինչպէս յայտնում է «Italie» թերթը, իբր թէ վճռել է իրեն շրջապատել զուիցերական զօրքերով։

## «ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԵՌԱԳՐՆԵՐ

(Ռուսաց հեռագրական գործակալութիւնից)

Օգոստոսի 27-ից

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեւիչը գիշերն անցկացրեց հանգիստ. գոտկատեղի ցաւերը չեն տարածւում եւ չեն անհանգստացնում Օգոստափառ հիւանդին։ Ինքնազգացութիւնը գոհացուցիչ է։

ԼՈՆԴՈՆ. — Պեկինից ստացուած տեղեկութիւնների համաձայն, ռուսաց դեսպանը հաղորդել է չինաց արտաքին գործերի մինիստրին, որ Նիւչժուանից եւ Մուկդենի գաւառից ռուսական զօրքերը կհեռացուեն հոկտեմբերի 7-ին, եւ համաձայնութիւն է յայտնել Մուկդենում օտարերկրեայ առեւտուր բանալու համար։

Տոկիոյից հաղորդում են, որ Քորէայի կառավարութիւնը աշխատում է փակել տալ Պենիանգն օտարերկրեայ առեւտրի համար այն պայմանով, որ Վիչժուն բացուի, այս բանին դիմադրում է Ճապոնիան։

Կամչատկայի մօտ ճապոնական ձկնորսական նաւաստիների բռնուած ժամանակ ձերբակալուած ճապոնական սպաներն ազատ են արձակուած ծովակալ Ալէքսէեւի անմիջական միջամտութեամբ։

ԱՐԵՕԼ. — Տուրգենեւի յիշատակին ազնուականների ժողովարանում տեղի ունեցաւ երաժշտական երեկոյթ Սաւինայի եւ Իւժինի մասնակցութեամբ։

ՍԱՄԱՐԱ. — Բորսային կոմիտէտը մի տեղեկագիր տուեց տրանզիտային ապրանքների տեղափոխութիւնը բարեկարգելու համար դէպի Վոլգայի ափն երկաթուղի անցկացնելու մասին։ Այդ երկաթուղու կարիքն այնքան մեծ է եւ խնայողութիւններն այնքան մեծ կլինեն, որ ուղարկողներն իրենք են առաջարկում միջոցներն, այն պայմանով, որ ծախքերը ծածկուին ամեն մի վագոնից տուրք առնելով։

ՍՈՉԻ. — Այստեղ ժամանեց ճանապարհների հաղորդակցութեան մինիստր իշխան Խիլկովը։

ԱՐԵՕԼ. — Երկրագործութեան մինիստրը մեկնեց Մոսկուա։

ՈՒԱՇԻՆԳՏՕՆ. — Ծովակալ Կոտտեն հաղորդում է, որ Բէյրութում պատահած կռուի պատճառը մահմեդականների դէպի քրիստոնեաներն ունեցած թշնամական յարաբերութիւններն են եղել։ Բէյրութում սպանուած է 7 քրիստոնեայ։

ԼԻՍՍԱԲՈՆ. — Անգլիական թագաւորը Պորտուգալիայի թագաւորին նշանակեց անգլիական նաւատորմղի ծովակալ։

ՍՈՖԻԱ. — Ընտրութիւնները նշանակուած են հոկտեմբերի 12-ին։ Մինիստրները վերադարձան Սոֆիա։ Նորից սկսուեցին պաշտօնեաների փոփոխութիւն։

Թուրք կառավարութիւնն օտարերկրեայ թղթակիցներին արգելել է այցելել Մակեդոնիա։

ԿԱՀԻՐԷ.—Այստեղ երկիւղալի լուրեր են պտտում Սիրիայի երկրի դրութեան մասին. ասում են, որ դրուզները զինւում են. երկիւղ են կրում, որ Լիբանանի շրջանում կոտորածներ պատահեն։

ԲՈՒԴԱՊԵՇՏ.—Կայսրը մեկնեց Վիեննա։

Կ. ՊՈԼԻՍ.—Օրուանոս մեկնեց։ Պարտքերի միացման իրադէն չհրատարակուեց. այդ խնդիրը նորից յանձնուեց մինիստրների խորհրդին։ Այդ խնդիրն անյուսալի են համարում։

Կ. ՊՈԼԻՍ.—Սոֆիայից ստացուած տեղեկութիւններից երեւում է, որ տեղական մակեդոնական մի պատգամաւորութիւն օտարերկրեայ ներկայացուցիչներին յանձնել է մի կոչ այն բանի դէմ, որ թուրք զօրքերը բարբարոսաբար հալածում են խաղաղ բնակիչներին եւ աւերում են գիւղերը։

Դուռը ռուս եւ աւստրիա-ունգարական դեսպանատներին յանձնեց մի երկար յուշագիր ապստամբական հրոսակախմբերի գործունէութեան վերաբերմամբ Երկիրը խաղաղեցնելու համար գործադրւում են հետեւեալ միջոցները. հաղորդուող պաշտօնական տեղեկութիւններն ամեն տեղ հրատարակւում են. թուրք եւ յոյն մեծամեծներ եւ յանձնաժողովներ շրջում են երկիրը յորդորելու համար, որ լեռները փախած բնակչութիւնը գիւղերը վերադառնայ։ Կրուշեօ եւ ուրիշ տեղեր են ուղարկուած կառավարչական յանձնաժողովներ վերադարձնելու համար զօրքերի եւ բաշիբոզուկների կողոպտուած ինչքը

Կրուշևոյում հաւաքուած է յափշտակուած 5000 գլուխ տաւար։ Կողոպտուած գիւղացիները տանում են հաց, ճոթեղէն և հագուստ։

Օգոստոսի 28-ից

Կ. ՊՈԼԻՍ. — Սուլթանը ռուսական դեսպանին հաղորդել է. որը 500 ոսկի է ուղարկել բաշիբոզուկների ձեռքով Կրուշևոյի սպանուած քրիստոնեաների ընտանիքներին։ Ռումինիայի թագաւորը նուիրել է 10,000 ֆրանք։

ՍԷՆ-ՄԻԽԷԼ.—Տեղի ունեցաւ Սէն-Միխէլի ռուսական տաճարին ժողովրդական դպրոցի բացումը։

Կ. ՊՈԼԻՍ.—Թուրքական մի իրադէով հրամայւում է ամեն տուն խիստ խուզարկութեան ենթարկել. խուզարկութիւնները պէտք է կատարուեն իւրաքանչիւր դաւանութեան ներկայացուցիչների ներկայութեամբ Մոնաստիրի ու Ադրիանապոլսի վիլայեթներում խուզարկութիւնները արդէն սկսուած են. Մոնաստիրում և Դէդէ-Աղաջում կատարուած խուզարկութիւնները ոչ մի հետևանք չեն տուել։ Սահմանագլխի վրայ գտնուող Կրըխ-Քիլիսէ գաւառի զօրքերը հաւաքուած են Գէօկ-Թեփէ, բուլղարական սահմանագլխից 9 վերստ հեռաւորութեան վրայ։ Լուրերի համաձայն, ալբանիական բատալիոնների կապը ընդհատուած է։ Մոնաստիրում հիւպատոս ունեցող տէրութիւնների դեսպաններին Դրան ուղարկած հաղորդագրութեան մէջ ասուած է, թէ Մոնաստիրի զինուորական պահակներին հրամանագրուած է, որ կավազով անցնող հիւպատոսներին բարև կանգնեն ոստիկանները՝ պատահած ժամանակ՝ նոյնպէս բարև պէտք է կանգնել։ Այս հրամանագրութեան չհնազանդուած պարագայում, հիւպատոսները պարտաւոր են իշխանութիւններին լուր տալու։ Մակեդոնական նահանգների ու Ադրիանուպոլսի հիւպատոսական տեղեկութիւնները հաստատում են, որ ստացուած ամենախիստ հրամանների համաձայն, իշխանութիւններին յաջողուել է վերջին ժամանակները ապստամբական շարժումները բաւական զսպել։ Բէյրութում տեղի ունեցած ընդհարման վերաբերութեամբ Դրան հաղորդագրութիւնը կազմուած է հետևեալ կերպով. «Մի քանի մարդիկ, որոնց ով լինելը մինչև այժմ էլ կարելի չի եղել որոշել, յարձակուել են Մեզրաա թաղով անցնող չորս մահմեդականի վրայ, առանց որևէ պատճառի. առաջ է եկել կռիւ. զօրքը միջամտել ու կռուին վերջ է տուել։ Զինուորներից սպանուած է մի հոգի, իսկ բնակիչներից սպանուել ու վիրաւորուել է մի-մի հոգի։ Ինքը՝ անգլիական հիւպատոսը խոստովանել է թէ իբր կռուի նախապատճառներին պէտք է փնտռել քրիստոնեաների մէջ։ Կրուշևոյում կատարուած անցքերի առիթով յունական դեսպանին Բախտիար փաշայի արած բողոքի պատճառով, Թիւրք կառավարութիւնը հրամայել է խիստ քննութիւն կատարել։

Կ. ՊՈԼԻՍ. — Բէյրութից ստացուած հիւպատոսական նոր տեղեկութիւնների համաձայն, քաղաքի զանազան մասերում քրիստոնեաների կոտորածը շարունակւում է։ Մեծ իրարանցում է տիրում։ Առևտուրը դադարել է մահմեդականները փախել են։

Հիւպատոսական մարմնի ժողովում որոշում է տրուած պահանջել, որ նահանգապետը անմիջապէս յետ կանչուի և ամերիկական ծովակալից խնդրել, որ յանձնառու լինի՝ ի պահանջել հարկին՝ նաւահանգիստը պահպանել. 500 զինուոր ափ հանելու պատրաստութիւն է տեսել նա. սպասւում են պատերազմական ուրիշ նաւեր և։ Թիւրքական շահերի տեսակէտից անհրաժեշտ է յուզումը խաղաղեցնել, որպէս զի անկարգութիւնները չտարածուեն խառնվարար տարրեր եղած տեղերը։

ԲՈՒԴԱՊԵՇՏ.—Կայսրը զօրախաղերից յետոյ վերադարձաւ Բուդապեշտ, ուր մնալու է մինչև սեպտեմբերի 16-ը։

ԼՈՆԴՈՆ.—Վիկոմս Կրանբորնը, որ այժմ եղել է Մարքիզ Սոլիսբիւրի թողնում է արտաքին գործերի մինիստրութեան մէջ ունեցած քարտուղարութեան պաշտօնը։ Նրա փոխարէն նշանակւում է Հնդկական գործերի վարչութեան քարտուղար կոմս Պերսի։

ԲԵԼԳՐԱԴ, — «Նարոդնի Լիստի» և «Վեչերնէ Նովոստի» թերթերի դէմ ցոյցեր տեղի ունեցան, որոնք պատրաստուել էին ամբոխի կողմից, թւով մօտ 1000 հոգի։ Ամբոխը սրանց խմբագրատների ապակիները կոտրատել է։ Յարձակման ենթակայ եղող աշխատակիցները ամբոխի վրայ ատրճանակ են արձակել, որից վիրաւորուել են մի-քանի մարդիկ։ Ժանդարմները միջամտելով ամբոխը ցրուել են։

## ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Развѣдчик»-ում պատմւում է ռուս-տաճկական պատերազմից մի անեկդոտ։

25 տարի առաջ երբ ռուս կոզակների գունդը գտնւում էր բուլղարական իշխանապետութեան և Թիւրքական սահմանի վրայ տարածուած մի յետ ընկած գիւղում, նրանց մէջ էր նաև N. ծերունի գնդապետը, որը սիրում էր կոզակներին և սիրւում էր նրանցից։ Ամեն մի կազակ սիրով կատարում էր նրա ամեն մի թէկուզ չնչին պահանջը։ Նա ասում էր, որ ինքը կազակների հետ ապրելով, շատ լաւ ուսումնասիրել էր նրանց լեզուն և գիտէ խօսել։ Գիտէ, թէ ինչ է նշանակում «гасъ», «пузырь», «принчъ» (նաւթալամպի ապակի, բրինձ), և այլն։

Մէկ օր գնդապետը կամենում է գլուխը խուզել. կանչում է մի կազակի և ասում «Поди, братецъ, приведи мнѣ стрыжака», մտածելով, որ եթէ «Цирюльникъ» ասի կազակը կարող է չհասկանալ։ Բանից դուրս է գալիս, որ «стрыжакъ» բառը նշանակում է 2 տարեկան բաշը և ագին՝ խուզած ձի։

Կոզակն ընկնում է ամբողջ գիւղը այդպիսի մի ձի գտնելու համար, բայց չի յաջողւում մինչդեռ գնդապետի պահանջը հարկաւոր էր անպատճառ կատարել։ Վերջապէս գտնում է մի երեք տարեկան ձի, և. խուզելով նրա բաշն ու ագին. բերում է գնդապետի բակն ու ինքը ներս մտնում։

—Ձերդ գերազանցութիւնը, բերել եմ «стрыжакъ»-ին։

Գնդապետը հրամայում է ներս բերել նրան։ Կոզակը շփոթւում է. բայց հրամանը մտածում է, թէ չի կարելի չկատարել, ուստի պատասխանում է՝ «շատ բարի ձերդ գերազանցութիւնը» և դուրս գալիս։ Մի քանի քայլից ներս է մտնում,—թէ «стрыжакъ»-ը վախենում է ու ներս չի գալիս։ Գնդապետը, կարծելով, թէ սափրիչը դէպի ինքը մեծ յարգանք տածելով, չէ կամենում ներս գալ, հրամայում է ուրիշների օգնութեամբ ներս բերել։ Միքանի րոպէից գնդապետը դրան հետևը ինչ-որ փռնչոցներ ու հարուածների ձայներ է լսում։ Զարմանքով դուռը բաց է անում և տեսնում, որ մի ձի են ուզում ներս բերել, իսկ ձին, գոմից յետոյ զարդարուած սենեակ տեսնելով վախենում է ներս մտնել։

—Այս ինչ է, միթէ ձեր լեզուով սա «стрыжакъ» է։

—Ոչ, ձերդ գերազանցութիւնը, «стрыжакъ»-ը երկու տարեկան է լինում. իսկ սա երեք տարեկան է, որովհետև երկու տարեկան չկարողացայ գտնել, իսկ սա երեք ամսով մեծ է։

—Սրան տար, ուրեմն,—ասում է գնդապետը, և ինձ բեր ճիշտ երկու տարեկան «стрыжакъ», այնպիսին որ կարողանայ երեսս ածիլել։

—«Цирюлникъ ?» ձերդ գեր.։

—Այո «цирюлникъ», եթէ միայն ձեր լեզուով էլ նա այդպէս է կոչւում։

Գնդապետը, կոզակի իրեն չհասկանալու համար վիրաւորուած՝ դուռը ուժգին յետ է անում ու ներս մտնում, իսկ կոզակը ցաւելով իրեն գնդապետին հասկանալ չկարողանալու վրայ, զեկուցումն տալու իր հարիւրապետին, իր կատարած սխալի համար։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
ԼԻԱԿԱՏԱՐ ՑԱՆԿ
ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԵԼԻՔ ՊԻԷՍՆԵՐԻ

Ծախւում է Կեդրոնական գրավաճառանոցում և «Թատրոն» հանդէսի խմբագրատանը։
Վելիամինովսկայա փողոց № 28
(235) Գինն է 50 կոպ.։ 10—2

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներին։
Քիմիկօ-մեկրոսկոպիական կաբինէտ
Առաւօտը 12—2
Երեկոները 5—6
Մեծ Վանքի փողոց տուն Կուզանով
(114) 100—55

Բացուած 1883 թուականից
ՎԵՐԱ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎՆԱ ԳՐԻՆԵԵՒԱՅԻ
(երբեմն Դրժեւիցա-կովաշի)
պատրաստական դպրոցը պանսիօնով ընդունում է երեխաների պատրաստելու բոլոր միջնակարգ դպրոցներ մտնելու համար։
Հասցէն՝ Թիֆլիս, Սապեօրի փողոց տ. Կլիւչարևի, բժշկական վարչութեան շարքում։ 20—6

Всякій
можетъ заработать легко и честно до 400 руб. мѣсячно, безъ особыхъ знаній, и расходовъ. Посылайте только скорѣй Вашъ адресъ на U 113 an das
Annoncen-Bureau des Merkur
in Mannheim Meerfeldstrasse 44
(211) 50—16

ՕԳՏՈՒԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ
Վ. եւ Ա. Խուդավերդեանների հագուստների խանութում,
որը, գտնւում է Գոլովինսկի պրոսպեկտի վրայ առաջին գիմնազիոնի հանդէպ, նշանակուած է
միմիայն 15 օրով
ՉՏԵՍՆՈՒԱԾ ԱՐԺԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ
ծախու տրուած են՝ ձմեռային եւ ամառային սեզոններից մնացած՝
տղամարդկանց, կանանց եւ երեխայոց
լոր այ
ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԸ,
որոնց գները անպատմելի կերպով պակասեցրած են իսկականից 30%-ից մինչև 50%։
ՕԳՏՈՒԵՑԷ՛Ք ԴԷՊՔԻ՜Ց
ԱՆՊԱՅՄԱՆ ԱՌԱՆՑ ՍԱԿԱՐԿՈՒԹԵԱՆ
(323) 15—5

ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՀԵՍՏ
Գ. Ի. ՊԱԼԻՋԷՆԻ
ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ,
ՌԸԺԵՒԻ ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԿՈՉԵԼԵՒԻ ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Թիֆլիս, Գոլովինսկիյ պրոսպ., տ. Մանթաշեանի,
Բագու, Օլգինսկայա փող., տ. քաղաքային վարչութեան։
Պոստի, գրելու, գրքերի, ալբոմների, տպագրական, լրագրական մունդշտուկի, փաթաթելու թղթեր, ժապաւէններ, ծրարներ, [illegible] և գիւանական պարագաներ։ Տելեֆոն 67. 149 24—14.

Իմ աշխատասիրութեամբ լոյս են տեսել
ԿՐՕՆԻ հետեւեալ ԴԱՍԱԳՐԵՐԸ

Աշակերտաց համար

| | | |
|---|---|---|
| 1. | Դասատետր կրօնի Ա. տարի | 25 կպ. |
| 2. | » » Բ. » | 20 » |
| 3. | » » Գ. » | 30 » |
| 4. | Հին — ուխտ Դ. » | 35 » |
| 5. | Նոր — ուխտ Ե. » | 40 » |
| 6. | Գործք առաքելոց Զ. » | 40 » |

Ուսուցչաց համար

| | | |
|---|---|---|
| 7. | Ուսուցումն քրիստոնէական կրօնի Դ. հատոր | 1—50 |
| 8. | » » » Ե. » | » 50 |
| 9. | Ուղեցոյց կրօնի — հին—ուխտ (սպառուած) | — — |
| 10. | » » — Նոր—ուխտ | 2—5 |

Ինձ դիմողներն ստանում են 1. 6. տարիների համար 25%, 2. 3. 4. 5 տարիների համար 20%. իսկ 7. 8. 9. 10. տարիների համար 35% զեղչ։
Կարելի է դիմել ինձ՝ 1. Коммерческое училище. 2 Центральная книжная торговля և 3. Книжный магазинъ «Гуттенбергъ»
(222) 10—8 Սահակ քահ. Սահակեան։

ԴԱՍԱԳՐՔԵՐ ԿՐՕՆԻ
Պատրաստուած յատկապէս պետական դպրոցների հայ- աշակերտների և աշակերտուհիների համար, աշխ. Եզնիկ ա. ք. Երզնկեանի։
1), Առաջին գրքոյկ, «Աղօթքներ (բացատրութեամբ) և գլխաւոր տօների (համառօտ) պատմութիւններ» գ. տպ. գինը 20 կոպ.
2). Երկրորդ գրքոյկի ա. մասը « Հին ուխտի և պատմութիւններ» (բացատրութեամբ) բ. տպ. գինը 30 կոպ.
3). Երկրորդ գրքոյկի բ. մասը « Նոր—ուխտի և պատմութիւններ» բացատրութեամբ) գինը 30 կոպ.
զումարով գնողներին 30 % զեղչում։
Դիմել Тифлисъ, Прот. Езнику Ерзинкянцу
(223) 10—9

„ԳՐԱՄՈՖՈՆ"
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„ԳՐԱՄՈՖՈՆ"



Թիֆլիս, Գոլով. պրոսպէկտ, տուն Արծրունի № 7։ Հասցէն հեռագրի համար Թիֆլիս Գրամաֆոնի ընկերութիւն. հեռախօս № 69.

Մեծ քանակութեամբ բազմատեսակ ամենակատարելագործուած գրամոֆոններ։
Ահագին քանակութեամբ պլաստիններ յայտնի և երևելի երգիչների ռուս, հայ, վրացի, թիւրք, պարսիկ, լեհացի, ֆրանսիացի, անգլիացի, իտալացի, գերմանացի և այլն։
Պլաստինների ընտրութեան ժամանակ, խնդրում ենք ուշադրութիւն դարձնել մեր գործարանի «Հրեշտակը գրելիս» կնիքի վրայ, առանց այդ կնիքի պլաստինները անպայման կեղծ են։
Ընկերութեան պահեստին հետ կայ յատուկ գործարան, որտեղ, հարկ պահանջած դէպքում ուղղւում են գրամաֆոնները։
Գրամոֆոնների կանոնաւոր բանելու մասին, երեք տարուայ համար երաշխաւորութեան թուղթ է տրւում։
Ապրանքը փաթաթելու և կապելու ծախքը մագազինի հաշուին է։
Ապարատների առաքումը մինչև բոլոր երկաթուղիների կայարանները (նոյնպէս և ամառուայ ամիսներին՝ նաւահանգիստները) ընկերութիւնը իւր հաշուով է անում։
Պոստով առաքման ծախքի կէսը «Գրամաֆոնի» ընկերութիւնը իւր վրայ է առնում։
Կիրակի օրերը խանութը փակ է իսկ միւս օրերը առաւօտեան ժամը 8-ից մինչև երեկոյեան ժամը 9-ը բաց։
ՊԱՀԱՆՋԵՑԷՔ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԿԱՏԱԼՈԳՆԵՐ
Մեծ թւով առնողներին ուղարկւում է ըստ պահանջման նոր Պրէյս կուրանտներ։ (224) 30—9

Дозволено Цензурою 28-го Августа 1903г. Տպարան Վերէյչև և Կամենմախեր Типографія Вереичевъ и Каменмахеръ Михайл. пр. Телеф. №852